Այդ գործով Շեվչենկոյին ել են ձերբակառում : Կիսուու կիւռում դանված ժամանակ նա հանդիպել է Կոստո մարովի և ընկերության մյուս անդամների հետ , կարդացել ե նրանց մոտ իր բանաստեղծությունները , վեճի յե մտել նրանց հետ նրանց սահմանափակ ծրագրի մասին , չի համաձայնվել նրանց պայքարի մեթոդներին : Հետաքննության ժամանակ գրեթե քոլոր ձերբակալվածները հայտարարում են , վոր Շենքունկոն ընկերության անդամ չի յեղել : Այսուամենայնիվ նրա նկատմամբ ամենածանր դատավճիռ ե կայացվում : Թաղավորը դատապարտում ե նրան վոչ այլ բանի , քան նրա բոցավառ ու ցասումնալից բանաստեղծությունների համար : Դատավճիռ մեջ ասված ե այսպես .

«Շեվչենկոն... դրել ե ուկրաինական լեզվով իւր-  
ովովարարական բանաստեղծություններ։ Նրանց մեջ  
նաև մեկ լավիս ե Ուկրաինայի անարդարության մա-  
սին, մեկ պատմում ե կաղակային անցյալի փառքի  
մասին, մեկ վատ խոսքերով ծաղրում ե թագավորին  
և նրա ընտանիքին։ Խոկ այն, վոր Շեվչենկոն այդ յեր-  
կերով բանաստեղծի փառք ե ձեռք բերել, հենց դրա-  
նով ել այդ բանաստեղծությունները կրկնակի վնա-  
սակար են ու վտանգավոր։ Նրա համար ել նրան վոր-  
պես ամուր առողջության տեր մարդու պետք ե  
հանձնել Որենբուրգի զորամասին և հայտնել հրամա-  
նատարությանը, վոր աչալուրջ հսկեն նրան»։

Ժողովրդի գահին Նիկոլայ առաջինը լավ եր հեշտում, թե ինչպիսի մեծ գեր և խաղացել Պուշկինի և Լերմոնտովի հեղափոխական պոեզիան։ Նա գիտեց

Շեվշենկոն նախատեսում եր, վոր թագավորը նը-  
րան չի ների: Ցարական պահնորդական բաժնի կաղե-  
մատում դառնված ժամանակ նա, ի պատասխան դործի  
ընթացքում յեղած սպառնալիքների, զրել ե Հրաշա-  
լի բանաստեղծությունների մի ամբողջ շարք. հատ-  
կապես հետաքրքրական ե մի բանաստեղծություն.

Միենույն է լինձ, թե Ուկրաինա  
կամ մի այլ յերկրում պիտի ապրեմ յես,  
Յեկը ովկ կհիշի, ովկ կմոռանա  
լինձ ձյուների մեջ, պանդուխտի վորսկես  
Մեկ է լինձ համար այդ բոլորն այնպես:

Բանաստեղծին հուղողն այդ չեր։ Անձնական ճակատապահը նրան դրազգացնողը։ Նրան հուղում են ավելի կարևորը, —ի՞նչ կընի ժողովրդի հետ, Ուկրաինայի հետ։

ինձ միւնույն չե լոկ մի բան միայն,  
վոր կընացնեն մարդիկ նենդությամբ  
վողջ Ուկրաինան, —և կրակի մեջ,  
Թալանի տալով, կարթացնեն նրան . . .

Ոխ, միւնույն չե այս բոլորն միայն :

Յարական դատաստանը բանաստեղծի հետ չափազանց դաժան եր : Շեվչենկոն գլուխը բարձր պահած լսեց դատավճիռը : Նրա վողջ առնական կազմը՝ վածքը, յեռանդուն բաց դեմքը, պայծառ սրատես աչքերը, ամենն ու ամենն ասում ելին . . . վոչ, չեք ընկճի . . . կպայքարենք . . .

1847 թվի մայիսի 30-ին նրան Պետերբուրգից աքսորեցին և վոչ մի տեղ կանգ չառնելով հուլիսի 9-ին հասցրին Որենքուրդ : Տեղական իշխանությանը վտանգավոր եր թվում բանաստեղծին քաղաքում թողնել, վորտեղ այդ ժամանակ քաղաքական շատ աքսորյալներ կային և Շեվչենկոյին ուղարկեցին ավելի հեռու . . . Որոկի բերդը :

Վ

Որսկի բերդում Շեվչենկոյին 191 №-ի տակ ընդունեցին 5-րդ գծային գումարտակի սոսկական դին-վոր :

— Յեթե յես հրեշ լինեյի, արնախում, նույնիսկ այն ժամանակ ել ավելի հարմար պատիժ ինձ համար չելին կարող հնարել, քան ինձ աքսորելը վորպես սոսկական զինվոր Որենքուրդի առանձին կորպուսում, —գրում ե Շեվչենկոն իր «Որադրում» :

Ամբողջ որը անվերջ զինավարքություն, բութ և անբովանդակ «դասեր», հարբած յեփրեյտորի մըշտական սպառնալիքներն ու հսկողությունը և բանաւ-

տեղծին հատկապես կցված «քեռին» : Իսկ յերեկոյան . . .

«Զինվորները վերջացնում ելին վարժությունը, սկսում ելին պատմել, թե ում են ծեծել, ում են խոստացել ծեծել: Աղմուկը, աղաղակն ու բալալայ-կան դուրս հանեցին ինձ զորանոցից» (Շեվչենկոյի նամակը 25-2-1848թ.) :

Իսկ դիշերները նույնքան անուրախ են, վորքան ցերեկը :

իջնում են դիշերները, մեր տունը դարշահոս, իսկ նրանց հետեւից խոհերը . . . կջախջախեն Հույսը և սիրտը նրա հետ միասին . . . Այն ինչ վոր դեռ չեն համարձակվում ասել, Ցել ամեն ինչ կարտաքսեն, ցրիվ կտան . . .

Իսկ չուրջը վոչ մի ժառ չկա: Ամառն այստեղ չող ե, ձմեռը սարսափելի ցուրտ: Շեվչենկոն այդ անապատն անվանեց «բաց դերեկման», վորը պատրաստ եր կենդանի թաղել նրան: Բայց ամենից ծանրը նրա համար զրելու և նկարելու արգելքն եր:

— Յես սոսկալի տանջվում եմ, ինձ արդելված ե գրել և նկարել (նամակ 11-12-1847թ.) :

Ցել վորքան ել այդ դժվար լիներ, բանաստեղծը դաղմանբար, իր վիռքիկ ծոցատերում, զրում ե իր խոհերը, յերաղանքներն ու յերգերը:

Ցել դարձյալ ստիպված ելի յես  
Թաղցնել պահակից իմ վոգեվորությունը,  
Ցել գրել ինչպես յերբեմն ելի անում,  
Թերթիկներ, լալ լոռության մեջ . . .  
Վորքան ծանր և լաց լինելը . . .

Արտորի շրջանում դրած նրա նոր բանաստեղծություններում մենք չենք հանդիպում զղջման և վոչ թյուններում մենք չենք հանդիպում զղջման և վոչ մի խոսքի կամ նախորդ շրջանի ստեղծագործություններից հրաժարվելու, կամ գոյություն ունեցող կարգի հետ հաշտութելու մտքի:

Պատոժվում եմ, տանջվում, բայց չեմ զղըում... — պսում ե բանաստեղծը։ Նրա նոր բանաստեղծությունները, ինչպես և նախորդները, «ուղղված են ժողովրդի գլխավոր թշնամիների» —ինքնակալության և զովրդի գլխավոր թշնամիների։ «Իշխանուհի» պոեմում բանաստեղծը մեծ ուժով պատկերում է սոցիալական անհավասարությունը։ Մարդիկ հաղարներով միանում են քաղցից։ «Գյուղում հեծեծում ե քաղցը»։ և այդ նույն ժամանակ։

Զբոսնում ե իշխանը, զբոսնում են պահերը,  
Աչա Նրանք հարբած փռվեցին հատակին:

Կալիսածառեր-պաներն ուբախ են անընդուռ  
թյան համար —

Վոր հացը դոնե յերեք տարի չբուսնի,  
Այն ժամանակ և Փարիզում, և ամենուրեք,  
վորտեղ հարկավոր ե,  
Մենք կարմածատերեսս զույց կտանք մեղ:

Հարուստ յերկիրը այդպես ուժասպառ ու աչքա-  
թող ելին արել ճորտատերերը։ Հարստագույն բնու-  
թյուն, լայնածավալ տափաստաններ, խիստ անտառ-  
ներ, ջրառատ գետեր, խսկական յերկրային դրախտ։  
Խոկ այդ յերկրային դրախտում — ճնշված մարդիկ։  
Ժողովրդի լավագույն մարդկանց սրտերը լցնում եր

զա պաների դեմ կովելու ցանկությամբ : Բանաս-  
տեղծը սիրով և նկարագում «Վառնակին», (փախած  
կտապալարայալ), վորը «մոլիթում եր բոլորին, վո-  
րոնք պան եյին կոչվում» :

Հենց այդտեղ Որսկի բերդում բանաստեղծը գը-  
լում ե իր ինքնակենսագրական անմոռանալի վոտա-  
նակո՞ները «Լրացավ արդեն իմ տասներկու տարին»,  
«Ա. Ռ. Կազաչկովսկուն», և մի քանի լիրիքական բա-  
նաստեղծություններ. «Ո խոհեր իմ խոհեր իմ»,  
«Մայր ե մտնում արեք, լեռները սեանում են», «Ինձ  
համար ել զարդանալի յե», և ուրիշները: Դրանք  
ուկըախնական գրականության մարդարիտներն են,  
վորոնք համաշխարհային պոեզիայի լավագույն լիրի-  
քական բանաստեղծությունների շարքն են դասվում:

թռեք վորպիս աղավնիների  
կապտառ յերամ,  
Դնեպրի լայնարձակ դաշտերից  
Այս անապատ յերկիրը՝  
Ման գալու կիրդիզների մեջ:  
Թեև նրանք թշվառ են,  
Թեև նրանք մերկ են, բայց ու  
Ազատ աղոթում են աստծուն:

Մեկ ուրիշ բանաստեղծության մեջ, վորի հիմքում գրված է կիրագիրական ժողովրդական լեզենդը,

Շեվչենկոն նկարում եւ անապատի ծանր դրությունը,  
վորտեղ

Ուղարք լազ կլինի, իսկ կայսակը  
Գլուխը կկախի և կնայի  
Տափաստանին...

Մենք հաճախ ենք հանդիպում բանաստեղծ և  
նկարիչ Շեվչենկոյի ստեղծագործության մեջ դեպի  
կիրագիրական ժողովուրդը յեղած համակրանքին:

Ցարական Ռուսաստանը «ժողովուրդների բանո»  
եր: Դեռ «Կովկաս» պոեմում բանաստեղծն ընդգծում  
է, վոր ցարական Ռուսաստանում

Մոլեավանից սկսած մինչև Փիննը  
Լոռում են բոլոր լեզուներով...

Բանաստեղծն ավելի յե բոնկվում զայրութով և  
բոլոր ժողովուրդներին կոչ ե անում թոթափել ցա-  
րիզմի լուծը: Բոլոր ժողովուրդներին դիմում ե նա  
սիրո և հարցանքի խոսքով: Թե վորքան խորն եր  
Շեվչենկոն զգում ժողովուրդների բարեկամու-  
թյան անհրաժեշտությունը, վկայում ե նաև 1842  
թվին Որսկու բերդում գրած նրա «Յերբ մենք կա-  
զակներ եյինք» բանաստեղծությունը:

Շեվչենկոն ատում եր պաներին անկախ նրանց ազ-  
գությունից: Նրա յերկերում հնչում ե սրբաղան ա-  
տելությունը հանդեպ լեհական պաների, հանդեպ  
Ռադզիվիլների, Վիչենեկեցիկների, Բրանիցիների,  
Պոտոչկիների և ուկրաինական ժողովրդի դարավոր  
մյուս թշնամիների: Բայց Շեվչենկոն ճանաչում և  
հարգում եր մյուս լեհացիներին, հեղափոխական-

ներին, վորոնք սլայքարում եյին ցարիզմի դեմ և  
սասանում եյին ճորտատիրության հիմքերը: Այդ լե-  
հերին, իրենց աշխատավոր ժողովրդի արժանավոր  
ներկայացուցիչներին եր դիմում նա իր բանաստեղ-  
ծության մեջ.

Յերբ մենք կաղակներ եյինք և չկար Ու-  
նիան\*)

Ինչքան ուրամա եր մեր կյանքը:  
Բարեկամ եյինք աղատ լեհերին  
Պարծենում եյինք աղատ տափաստաններով:  
Ժողովուրդներին անկեղծորեն ուղում եյին համե-  
րաշխ ապրել, բայց

Յեկան կսենդզները\*\*), կրակ բաց թողին,  
Այրեցին մեր խաղաղ դրախտը,  
Յեկ թափելով արցունքի ու արյան ծով...  
Քրիստոսի անունով լեռան վրա,  
Դատապարտեցին վորբերին...

Ահա այսպես մեր բարեկամ յեղբայր,  
Մենք մինչեւ այժմ ել կապը եյինք հաշտ.  
Բայց մեզ կովեցնելով բաժանեցին  
Նենդ կսենդզը և մաղնատ թշնամին:

Ահա թե ով և մեղամփոք, վոր արյան գետեր և  
արցունքներ թափեցին, վոր ընկան ժողովրդի լավա-  
դույն զավակները: Յեկ այդ աղահ կսենդզների ու  
մաղնատների դժմի վրայով բանաստեղծը կոչ և ա-  
նում.

\*) Միություն: Ծ. Խ.

\*\*) Լեհական տերտեր: Ծ. Խ.

Բնդունիք նորից կաղակի բարեկամությունը,  
Յեվ անկեղծ սրտով ձեռքէ մեկնիք մեղ...

Ժողովուրդների այդ միացման մեջ ընդգեմ իր  
բնց ընդհանուր վատթարագույն թշնամությարիզմի,  
Շեվչենկոն տեսնում ե փրկությունը ժողովրդական  
վշտից:

Այդ բանաստեղծությունը առանձնահատուկ նը-  
շանակություն ունի նաև այն բանի համար, վոր նա  
պրվել ե 1847 թվին, Կրակովյան հեղափոխությունից  
անմիջապես հետո, վորի մասին Ենգելսը դրել ե.

«1846 թվին Կրակովում բոնկլեց առաջին քա-  
ղաքական հեղափոխությունը, վորը հոչակեց սո-  
ցիալիստական պահանջներ»:

(Մարքս-Ենգելս, Յերկեր, Հատ. 15, Էջ 551):

«Այդ շարժումները (1846 և 1863 թ. թ. —Պ.  
Ա.) վոչ միայն աղջային եյլին, նրանք միենույն  
ժամանակ ուղղված եյլին դյուզացիությունն ա-  
ղատելու և հողը նրանց սեփականությունը դարձ-  
նելու կողմը» (Նույն տեղ Էջ 222):

Շեվչենկոն ուշադիր հետեւում եր լեհաստանի  
հեղափոխական շարժումներին, ծանոթ եր դրան  
մասնակցող մի ամբողջ շարք մարդկանց և այդ մարդ-  
կանց են նվիրում նա իր բանաստեղծությունը: Այդ-  
պես ե Շեվչենկոյի վերաբերմունքը նաև հրեական  
ժողովրդի նկատմամբ: Բուրժուատական նացիոնալիստները  
ժողովրդի դուրս եյլին դալիս, ամեն կերպ աշխատում  
կաշվից դուրս եյլին դալիս, ամեն կերպ աշխատում  
ելին բանաստեղծին վերաբեր անբարյացակամ ու  
արհամարհական վերաբերմունք դեպի հրեական ժո-

ղովուրդը: Միաժամանակ նացիոնալիստները միշտ  
կեղծիք եյլին կատարում բանաստեղծի վերաբերմուն-  
կեղծիք եյլին կատարում: Բանաստեղծին՝ նրանք ցույց եյլին տալիս  
քը հրեական հարուստներին՝ նրանք ցույց եյլին տալիս  
վորպես վերաբերմունք ամբողջ հրեա ժողովրդին:

Հրեական հարուստները (առևտրականները, մի-  
կամանները, կապալառունները և ուրիշները) լեհական  
կետանները, կապալառունները և ուրիշները լեհական  
կետաններին հետ միասին ճնշում եյլին  
ժողովրդին: Բանաստեղծի ատելությունը դեպի  
նրանց ինչպես և դեպի մյուս պաները միանդամայն  
որինական եր ու որդանական:

Բայց մի բուռն հարուստները ժողովուրդ չեն  
կազմում: Հրեական ժողովրդական աշխատավոր մաս-  
կադարձն Շեվչենկոն վերաբերմունք եր համակրանքով,  
հարգանքով: Դրա մասին են խոսում բանաստեղծի  
կյանքի մի շարք փաստերը: 1845 թվի գալնանը մի  
կյանքի մի շարք փաստերը: 1845 թվի գալնանը մի  
շերտ նախ քան իր ձերբակալությունը, յերբ Շեվ-  
չենկոն անցնում եր Պրիլուկի քաղաքով, արլում և  
հրեական մի աղքատիկ խրճիթ: Բանաստեղծը շտա-  
պում ե դեպի հրդեհի վայրը և ուրիշների հետ միա-  
պում ե դեպի հրդեհի վայրը և ուրիշների հետ միա-  
պում ե փրկել տուժողի ունեցվածքը: Յերե-  
սին սկսում ե փրկել տուժողի ունեցվածքը: Յերե-  
սին սկսում ե հանդցըրին Շեվչենկոն հանդիմանեց ներկա  
վառվող մի քանի դյուզացիոնների, վորոնք հրդեհը  
վառվող մի քանի դյուզացիոնների, վորոնք հրդեհը  
վառվող մի քանի մասնակցում միայն այն պատճա-  
ճանդցնելուն չելին մասնակցում միայն այն պատճա-  
ճանդցնելուն ու կրոնիթ եր: Շեվչենկոն  
ուղի, վոր վառվողը հրեական խրճիթ եր: Շեվչենկոն  
նրանց հայտնեց, վոր աղքատ մարդը, անկախ նրա աղ-  
քությունից ու կրոնիթ, մեր ամենամոտիկ յեղացըն  
ե:

Շեվչենկոյի բարեկամ բժիշկ Կողաչկովսկին եր  
հիշողությունների մեջ պատմում ե.

«Հրեաների հետ իմ ունեցած գործերի ընթաց-

քում պատահում եր, վոր յերբեմն նրանք լցվում եյին իմ հյուրասենյակը, վորոեղ սովորաբար Շեզէնկոն պարապում եր: Այդ աղմկալի հալաւագութները վոչ միայն չեյին խանդարում նրան (թեև նա կարող եր գնալ առանձնասենյակ), ընդհակառակը, գրելը շարունակելով լսում եր նա հրեաների խոսակցությունները, միջամտում եր նրանց զրույցներին և ծիծաղեցնելով նրանց վորեա բանով՝ ինքն ել ամբողջ հոգով քահ քահ ծիծաղում եր:



1848 թվին գարնանը Շելչենկոյին վորպես նկարչի, մացրին արշավախումբը, վորր հետախուզում և ուսումնասիրում եր Արալյան ծովի ափերը: Արշավախումբը գլխավորող լեյտենանոտ Բուտակովը լավ եր վերաբերքում Շելչենկոյի հետ: Զինավարժություններից և հրամանատարության մշտական հոկոգությունից ազատված, բանաստեղծը նկարում եր Արալյան ծովի տեսարանները և շատ ել դրում եր: Յերկար ժամանակ, համարյա յերկու տարի, Շելչենկոն արշավախմբի հետ անցկացրեց Կոո-Արալ Փորտում, այսուղ, վորտեղ—

Ցել ալիքներն են քնարը և յերկինքը պղտոր...

Շելչենկոյի համար շատ բեղմնավոր ժամանակ եր այդ: Թողնելով քիչ ծանոթ հեռավոր այդ վայրը նա ջերմությամբ և բաժանվում նրանից.

Մնաս բարե կոո-Արալ խղճուկ,  
Յերկու տարի իմ վիշտը դաժան

Դարձյալ հմտորեն գու վանում եյիր.

Շնորհակալություն...

Այդտեղ Շելչենկոն դրեց «Արքաները» բանաստեղծությունների շարքը, վորտեղ հին պատմությունից վերցրած վառ որինակներով նա ցույց ետալիս «սուրբ» արքաների անբարոյականությունը, «Յերեցիոսի աղջիկը», «Մարինա», «Հարյուրապետ» պոեմները և շատ (մոտ 80) ուրիշ փոքրածավալ բանաստեղծություններ:

Նրա նոր ստեղծագործությունների մեջ ել ավելի սուր և հնչում ուկրաինական լիրերալ պամերին, այսպէս կոչված պատրիոտներին, ուղղված ատելությունը: Շելչենկոն անձամբ շատ և տեսել այդպիսի «աղահ պատրիոտների» և դեռ «Իշխանուհի» պոեմում ատելությամբ շպրտել և նրանց յերեսին.

Իսկ պատրիոտը, թշվաւների յելքայրը,  
Ցել աղջկան և հորթն և խլում  
Գեղջուկից, —և աստված չգիտե այդ,  
Իսկ յեթե զիտե, ապօ լոռում ե...

«Մարինա» պոեմում բանաստեղծը գրում ե.  
Վայրենի հովազն ել չի անի այն,  
Ինչ վոր անում եք դուք,  
Յերեսներիդ իաչ հանելով:

Շելչենկոն դիտեր ուկրաինական այդ կալվածտերի խոկական արժեքը, վորոնք սիրում եյին պարծենալ իրենց աղատամտությամբ, «աղատախոսել», շաղակրատել ժողովրդի մասին ամեն տեսակ թեմաների շուրջը: Յել նա զգուշացնում ե այդ կեղծավոր բարեկամներից: Այդպիսի «պատրիոտների» հասցեյին նա դրում ե.

«Զվարճացիր զիրացած վարան,  
Զվարճացիր անպիտան բարի պան,  
Սերունդ լախտավոր տխմարի.  
Նա զտարյուն պատրիոտ ե  
Յեվ հոգով քրիստոնեա.  
Այդն տարի նա կիեվ ե դնում,  
Պաների մեջ նա յերկար բաձկոնով ե շըռում,  
Պանդոկում գեղջուկների հետ ե նստում,  
Յեվ ձեացնում ե իրեն ազատախոհ։  
Թէկուզ նկարիր—ահա նա ամբողջովին։

Այդ նա յեւուկրաինական լիբերալ կալվածաւ  
տերը. ճիշտ այնպես, ինչպես բոլոր պաները, ծաղրում  
են իրենց ճորտերին, անարդում՝ ճորտ աղջիկներին,  
տաժանակրության են ուղարկում անմեղ մարդկանց։  
Յեվ զայրագին բողոքով լցված բանաստեղծը շարու-  
նակում ե.

...Կյանքը դարշելի։

Ինչո՞ւ այդպես չեն կոչում նրան,  
Ինչո՞ւ չեն թքում նրա յերեսին,  
Ինչո՞ւ չեն կոխկրտում նրան...

«Այդ լախտավոր տխմարի» սերնդից մեկը—Սկո-  
րոպաղսկին 1918 թվին, կալված գերմանացիների հետ  
և հեթմանական լախտի համար, վաճառեց Ռուկրաինան  
նրանց։ Աղանասեր ուկրաինական ժողովուրդը այդ  
ծաղրը չհանդուրժեց և ամեսակադա ժամանակում  
սուսական մեծ ժողովրդի յեղբայրական ողնությամբ  
իր յերկիրն աղատեց այդ դարշանքից, չախչախե-  
լով հեթման Սկորոպաղսկուն և նրա զերմանական  
աերերին—իմպերիալիստական հափշտակիչներին։

\* \* \*

Եեվչենկոյի ստեղծադությունների մեջ մեծ  
տեղ են բանում ուկրաինական ժողովրդական յերդերի  
մոտիվները։ «Յեթե մի դույդ կոչիկներ ունենայի»,  
«Յեվ հարուստ եմ և գեղեցիկ եմ յես», «Միրեցի յես,  
նշանվեցի յես», «Մայրս ինձ ծնեց մետաքսի մեջ»,  
«Կկվիկը կուկու յեր կանչում», «Այ չի լինում խմել  
մեղրն ու դարեջուրը», «Տրորեցի կածանը յես հով-  
տի միջով», — սրանք ուկրաինական ժողովրդական  
տի մայիսի մոտիվներ են այնքան ծանոթ ու այնքան մո-  
տիկ, և միաժամանակ այնքան թարմ բանաստեղծի  
համարեղ յերկերի մեջ։

Կոս-Արալում դրված բանաստեղծությունների  
շարքում բանաստեղծը մեծ չերմությամբ վերադառ-  
նում է իր սիրած թեմաներից մեկին՝ մոր և յերե-  
խայի մասին։ Այդ թեմային նա վոտանավորների մի  
շարք են վիրել։ Բանաստեղծը հրճվում ե տեսնելով  
մորը կուշտ յերեխան ձեռքին։ Դա յերջանկության  
խորհրդանիշ է.

Յերկրային դրախտի գեղեցկությունների  
մեջ—

Ավելի գեղեցիկը չկտ իմ աչքում,  
Քան մոյրը կարմրաթուշ—ջահել  
Փոքրիկը սիրուն ձեռքին բանած։

Բայց ավա՞զ։ Բանաստեղծը հաղվագեղ և  
տեսնում յերջանիկ մայրերի կուշտ յերեխաներով։  
Ավելի շատ նա տեսնում է տանջված, անարդիված կա-  
նանց, քաղցած և զնցոտիսապատ յերեխաների։ Յու-  
րաքանչյուր այդպիսի հանդիպում բանաստեղծին  
հիշեցնում է իր մանկությունը։

Մանավանդ յերբ տեսնում ես,  
Վոր յերեխան այն դյուղական  
Կարծես ճյուղից պոկլած, մերկ եռ պա-  
տառութուն

Յեկ միայնակ ցանկապատի տակ  
Նստել ե կարկատած կտավը հագին.  
Ինձ թվում ե, վոր այդ յես եմ,  
Վոր դա իմ մանկությունն ե:

1849 թվականի նոյեմբերին արշավախումբը Կոս-  
Արալից վերադարձավ Որենքուրդ: Շեվչենկոյին ել  
թուլատրեցին զնալ այնաեղ, վոր վերջացնի Արաւան  
ծովի նկարները: Արշավախմբի պետ Բուտակովը  
խնդրեց իշխանությանը վորոշ չափով բարվոքել բա-  
նաստեղծի գրությունը: Շեվչենկոն խնդրեց, վոր  
դոնե իրեն թույլ տան նկարել: Բայց այդ ժամանակ  
ինչ-վոր հարբեցող սպա Պետերբուրգի իշխանություն-  
ներին դրեց, վոր Շեվչենկոն չի կատարում ցարական  
դատավճիռը, վոր նա շարունակում ե գրել և նկա-  
րել: Բանաստեղծի մոտ խուղարկություն կատարվեց,  
վերցրին նրա յերգերի տետրերը, նկարները, բարե-  
կամներից ստացած նամակները, Մինչև իսկ դրեբըն  
ել վերցրին—Պուշկինի, Լերմոնտովի, Շեքսպիրի  
ու ուրիշների յերկերը: Բանաստեղծին ճերբակալեցին և  
նստեցրին Որենքուրդի բանտը, վորտեղ նա մնաց հա-  
մարյա կես տարի: Այդաեղից 1850 թվին նրան Նովո-  
Պետրովսկի բերդն ուղարկեցին Կասպից ծովի  
մյուս ափում:

Շեվչենկոյի դրությունը չափազանց վատացավ:  
Նորից խիստ և բծախնդիր իշխանավորների մշտա-  
կան հսկողություն: Նորից զինավարժություն ե

«Պասեր»: Բանաստեղծին խստորեն արգելեցին գրել  
և նկարել: Ամեն որ նրան խուղարկում ելին, վերց-  
նում ելին մատիսներն ու թուղթը: Նույնիսկ իր  
անձնական նամակները նա պարտավոր եր տալ իշ-  
խանավորներին նայելու: Այդ ծանր տարիներին մի-  
ակ միսիթարությունն եր հայրենակից զինվորների  
հետ ունեցած ծանոթությունը, վորոնց հետ նա զրու-  
ցում եր, գլխաւորապես դիշերները, և յերգում եր  
նրանց հետ իր սիրած յերգերը:

Մի այլ միսիթարություն ևս: Նովո-Պետրովսկի  
գերդի ճանապարհին Շեվչենկոն Գուրիկ գյուղաքա-  
ղաքում գետնից վերցրեց ուռենու մի ճյուղ: Տերեց  
իր հետ այդ ճյուղը և տանկեց զորանոցի մոտ: Զը-  
րում եր հաճախ: Ճյուղը աճեց և նա բանաստեղծին  
հիշեցնում եր հեռավոր Ուկրաինայի մասին: Յեկ այդ  
գժվարին տարիներին բանաստեղծը չի կորցնում ա-  
զատվելու հույսը, չի կորցնում իր մարդկային ար-  
ժանապատվությունը:

1852 թվականի վերջում Նովո-Պետրովսկի բերդն  
և գալիս նոր պարետ Ա. Ռ. Ուսկովը: Վերաբերմունքը  
դեպի Շեվչենկոն դեպի լավը փոխվեց: Ուսկովի կինը  
Աղաթա Յեմելյանովնան մասնավոր նամակում Շեվ-  
չենկոյի մասին գրում ե.

«Վեհ, ինելոք ու պարզ ե նրա գեմքը. բարի և  
աղնիվ գեմք. պայծառ, քաղցր ե նրա հայացքը,  
գորշ կապտաղույն աչքերը բարեկամական դդաց  
մունք և հարդանք են առաջացնում դեպի նա:  
Նրա ձայնը փափուկ է, դուրեկան, խոսում ե նա  
սահուն, մաքուր, վորոշակի... Նրանից խելք և  
ջերմություն եր բուրում»:

Շեվչենկոն կապվեց պարետի մոքրիկ յերեխաների—Դիմիտրու և Նատալիայի հետ, իսկ յերբ չուսով մեռավ, Շեվչենկոն ապրեց այդ բոլորը վորապես անձնական վիշտ։ Իր ընկերոջ Կողաչկովսկուն դրած նամակում նա ասում է.

«Յես սկրեցի այդ չքնաղ յերեխային և նա, իսկ ճը, այսպէս եր կապված ինձ հետ, վոր յերեմն նույնիսկ յերազի մեջ ել կահչում եր իր ճաղատ քեռուն։ (Յես այժմ ամբողջովին ճանապատ եմ և ալեխառն)։ Յեվ ինչ։ Խեղճը հիդատ ու ալեխառն)։ Յեվ ինչ։ Խեղճը հիդատ ավանդացավ, յերկար տանջվեց ու մեռավ։ Յես ափսոսում եմ իմ փոքրիկ բարեկամին։ Յես թախծում եմ և յերեմն ծաղիկներ եմ տանում նրա թարմ շիրմին ու լաց եմ լինում»։

Բերդի արվարձանում Շեվչենկոն հրաշալի կավահող դտավ և սկսեց քանդակել։ Խշանությունը չգիտեր ինչպես վարդեր—Շեվչենկոյին արդելված եր չգիտեր ինչպես կարել, իսկ կարելի՞ յե նրան թույլ տալ գրել և նկարել, իսկ կարելի՞ յե նրան թույլ տալ քանդակել։ Պարետ Ռւսկովը վորոշեց այսպես—ինչ վոր արգելված չե, թույլատրելի յե։

Քանդակած դործերի մեջ կար քանդակագործական այսպիսի մի խումբ։ Կիրյիլը նստած եր ծածկասայլի մեջ և դոմիլա յեր նվազում։ Մածկասայլի դիմաց նստած եր նրա կինը, վորը կորել ե ծեծում և ժպտում ե վստաների մոտ նստած յերկու մերկ յերեխաներին։ Մածկասայլի աջակողմում հորթն ե կապված, ձախ կողմում—այծը։

Շեվչենկոյի նախաձեռնությամբ և պարետի թույլատրությամբ 1853 թվականի աշնանը բանաստեղծը զինվորների հետ միասին այդի յե տնկում։

Մառերը բերել ելին Աստրախանից և Գուրիեից։ Շեվչենկոյի խորհրդով Խանգա-Բարա ձորից առաջ մթենիներ։ Այդում դետնաւուն կառուցեցին, վորտեղ Շեվչենկոն կարող եր պարետի թույլատրությամբ, սուանց սառին իշխանավորների հոկողության, նկարել և գրել։ Այստեղ Շեվչենկոն ոռւսերեն լեզվով գրեց իր «Խշանուհին», «Յերաժիշտը», «Դժբախտը», «Կապիտանի կինը», «Նկարիչը» և այլն։

Ժողովրդի թշնամիները տարիներ շարունակ լուսթյան ելին մատնել Շեվչենկոյի ոռւսերեն գրված պատմվածքները, համարելով դրանք իր թե վոչ գեղարվեստական։ Բայց խակապես բուրդուական նացիոնալիստները կատաղում ելին այն բանի համար, վոր հանճարեկ բանաստեղծը ոռւսերեն լեզվով հյութեղ ու պատկերավոր գրել և գեղարվեստական բարձրագույն և սոցիալապես հաղեցված պատմվածքներ։

Պատմվածքներում ճիշտ այնպես, ինչպես և իր պոելիայում, Շեվչենկոն հավատարիմ իր դաշտավարներին՝ պաշտպանում ե ժողովրդի շահերը։ Կաղաչկովսկուն և Բոբյանսկուն դրած նաժակներում Շեվչենկոն ինքնայից ուղարկել «Ասք իզորի գնդի մասին» պոեմի տեքստը։ Նա ցանկանում ե թարգմանել պոեմը «Մեր հոգեհարազար սքանչելի լեզվով»։

Նովո-Պետրովմակի բերդում ամեն ինչ ընթանում ե առաջիկ նման։ Շեվչենկոյի դրությունը մի քիչ լալացել եր, բայց նա դարձյալ նույն իրավագործրկ զինվորն եր մնում, նրան վարժեցնում ելին և նրանից ուղղում ելին որինակելի ճակատային պատրաստել։ Նա զրում և նկարում եր զաղտնի, վախենալով,

վոր վորեկ մեկը կարող ե մատնլ իրեն իշխանության առաջ:

Մինչդեռ այդ ժամանակ յերկրի քաղաքական կյանքում զեպքերը հաջորդում եին իրար: Ցարից մը պարտվել եր Ղրիմի կամպանիայում: Դա նորից եր ասլացուցում ճորտատիրական կարգերի վորդ փոածությունը և սնանկությունը: Ամբողջ յերկրում լայնորեն ծավալվում ե զյուլացիական հեղափոխական շարժումը: 1855 թվականի փետրվարի 18-ին (Հ. ա.) մեռավ Նիկոլայ առաջին թագավորը և թագավորել սկսեց Ալեքսանդր յերկրորդը: Լիբերալներն սկսեցին հուսալ ու ֆորմների վրա:

Բանաստեղծի ընկերները սկսեցին աշխատել նրան աղատելու մասին: Այդ գործում յեռանդուն մասնակցություն ցույց տվին զբափ Ֆ. Պ. Տոլստոյը և նրա կինը Ա. Ի. Տոլստայան: Առաջին ամնիստիայի ժամանակ Ալեքսանդր յերկրորդը ցուցակներից ջընջեց Շեվչենկոյի անունը: Միայն 1857 թվականի մայիսի 2-ին Շեվչենկոն բարեկամներից տեղեկություն ստացավ, վոր իրեն ներել են: Բայց պաշտոնական հրաման դեռ չկար: Անհամբեր սպասելով իր ազատմանը, 1857 թվականի մայիսի 12-ից Շեվչենկոն սկսում է գրել իր «Որագիրը»: Դա հրաշալի գիրք ե, հեղինակի թողած արժեքավոր փաստաթուղթը իր շրջապատի, ապրումների, յերազանքների, հույսերի. մեծ բանաստեղծի բնավորության մասին: Այդ գիրքը տպագրության համար չեր նախատեսված: հեղինակը «Որագրում» գրի յե առնում այն բոլորը, վոր հետաքրքրում ե նրան: Այստեղ դիտողություններ կան ամենորյա աշխատանքի մասին, յումորիստական

պատմվածքներ սպաների հարբեցողության և անկյառությունների մասին, չերմ գատողություններ մարդկային արժանապատվության և այն մասին, վոր մեղ անհրաժեշտ եր խելացի սատիրա, դատողություններ եստետիկայի մասին և այլն: Ընթերցողի աչքերի առջելց անցում են բանաստեղծին չրջապատղ տարբեր մարդկանց մի ամբողջ պատկերասրահ և յուրաքանչյուրին նա ճիշտ և հաջողված բնութագիր և տալիս: Վորպես տաղանդավոր արվեստագետ՝ նա մի քանի դժերով նկարում ե ճիշտ պորտրեն:

Հուլիսի 21-ին ստացվեց Շեվչենկոյի յերկար սպասված հրամանը նրա աղատության մասին, բայց դեռ ցույց չեր արված, թե նա վորտեղ կարող եր մեկնել: Տաս որ ել պահեցին նրան: Ողոստոսի 1-ին պարետ Ռուկովը Շեվչենկոյին թույլ տվեց մեկնել Պետերբուրգ: Շեվչենկոն հրաժեշտ տվեց իր բարեկամներին և թողեց Նովա-Պետրովսկի բերդու:

Այսպիսով նա աքսորում մնաց 1847 թվի ապրիլ 5-ից (ձերբակալման որը) մինչև 1857 թվի ողոստոսի 1-ը—տասը տարի, յերեք ամիս և 27 որ:

## VII

Ողոստոսի 5-ին ձկնորսական նավակով Շեվչենկոն հասավ Աստրախան և նույն ամսի 22-ին, «Կնյաղ Պոժարսկի» նավով Վոլգայի մուալով ուղեկությունի նիմնի-Նովգորոդ: Նա հիանում է «Վոլգայի հրաշաղեղ ափերով», սքանչելի աեսարաններով; Տախտակամածի վրա նվազում եր հաճախ աղատ արձակված ջութակահարը: Բանաստեղծը մեծ բավականությամբ եր յում նրա յերաժշտությունը:

«Ենորհակալություն քեզ ճորտ Պաղանին:

Ծնորհակալություն քեզ իմ պատահական, իմ  
աղնիլ բարեկամ: Քո խզնուկ ջութակից ճորտի  
անարդված հոգու հեծեծանքներն են դուրս թըռ-  
չում և միապաղաղ, մոռայլ ու խոր հեծեծանքով  
ճուլում են միլիոնավոր ճորտերի հոգիների  
հետ:

Նավահցիկում բանաստեղծի մոտ հավաքվում  
էին նրա նոր ծանոթները: Խոսում են զրականության  
մասին և կարդում են զեղարվեստական նոր յերկեր:  
Շեվչենկոն զգում ե, վոր նա աքսորում անցկացրած  
տարիներին հետ և մնացել ժամանակակից դրակա-  
նությունից և ձեռք ե զարկում լրացնել բաց թողածը:  
Կարդալով «Նահանդական ոչերկները» Շեվչենկոն  
բարձր գնահատական և տալիս Սալտիկով-Շեղրի-  
նին և նրա ուսուցիչ Գոդովին:

«Յես՝ չնորհակալություն եմ հայտնում:

Յես ակնածում եմ Սալտիկովից. Ո, Գոդով,  
մեր անմահ Գոդով: Ինչպիսի ուրախությամբ  
նորից կլցվեր քո աղնիլ հոգին, տեսնելով քո  
կողքին այդպիսի հանճարեղ աշակերտի: Իմ բա-  
րեկամներ, իմ անկեղծ բարեկամներ: Գրեցեք,  
բարձրացրեք ձեր ձայնը այդ խեղճ, կեղտոս,  
անարդված ամբոխի համար: Այդ անպատճա-  
անխոս ոամիկների համար»:

Բանաստեղծն շտապում եր չուտ հասնել Պետեր-  
բուրդ, վորակեսղի մասնակցի զրական և հասարակա-  
կան կյանքին, ու շարունակի իր սիրած զեղարվես-  
տական աշխատանքը, վոր չուտ հանդիպի իր բարե-  
կամներին:

Սեպտեմբերի 20-ին նա հասնում է Նիժնի-Նով-  
գորոդ: Այստեղ նրան հայտնում են, վոր տեղական  
50

վոստիկանապետը հրաման է ստացել պահել Շեվչեն-  
կոյին և ետապային կարգով նրան հետ ուղարկել  
Արենբուրգ, իր հրաժարականի հրամանն ստանալու  
և բնակության վայրը վորոշելու համար: Այդ բանը  
շատ անհանդապացը բանաստեղծին: Բայց այս ան-  
դամ նրա բախտը բերեց: Տեղական իշխանությունը  
թույլ տվեց նրան մինչև Արենբուրգից հրաման  
ստացվելը մնալ Նիժնի-Նովգորոդում: Մայրաքաղաք  
մեկնելը հետաձգվեց անորոշ ժամանակով: Շեվչեն-  
կոն աշխատում եր, վորքան կարելի յե, լավգույն  
կերպով արդյունավետ ողտագործել իր ժամանակը  
Նիժնի-Նովգորոդում: Նա արտագրում և տպագրու-  
թյան և պատրաստում իր պատմվածքներն ու բա-  
նաստեղծությունները: Տպագրում ե իր «Նեռփիտ-  
ներ» նոր պոեման և «Վիճակ», «Մուսա» և «Փառք»  
բանաստեղծությունները:

Շատ նկարներ ե անում նա այդտեղ: Զնայած  
աշնանային անբարենպաստ յեղանակներին, նա նկա-  
րում է հնադարյան շինություններ, յեկեղեցիներ  
և այլն:

«Որագրից» մենք իմանում ենք.

«11-ը (Հոկտեմբերի): Իսկ այսոր առավոտյան  
պահին մեծ զժվարությամբ ուղեկվորվեցի Արխան-  
դելսկի տաճարը նկարելու. սառեցի արտասվելու  
աստիճան...»:

12-ը (Հոկտեմբերի): Յերեկ վերջացրի հրեշտա-  
կապետի անվան մայր տաճարի տպված պատկերը:  
Նիժնի-Նովգորոդում հրաշալի պահպանված, ինչ-  
նատիպ, գեղեցիկ և ամենահնադույն շինությունն  
եղա: Մայր տաճարը կառուցված է Նիժնի-Նովգորոդի

մէծ իշխան Յուրի Վահկոլուռվիչի ժամանակ 1227  
թվականին:

«15-ը (Հոկտեմբերի): Քամու և սառնամանիքի  
տակ նկարեցի յերկու անանուն աշտարակների տեսքը,  
Կրեմլյան պարսպի մի մասը և Զառչիելի տեսքը:  
Ընդհանրապես կարգին նկար ստացվեց: Յես շտա-  
պում եմ ավելի շատ եսքիզներ անել, վորովհեան  
յեթե ստիլված լինեմ այստեղ ձմեռելու, դոնե վոր-  
ես աշխատանք կունենամ»:

Նա նկարում ե նույնուն իր մի քանի ծանոթների  
պատկերները: Նյութական տեսակետից Շեվչենկոն  
շատ անապահով վիճակումն եր և հրճվում եր, յերբ  
առաջին անդամ պատվիրեցին նրան փողով նկարել:

«Առաջին պատկերն եմ նկարում փողով, քան-  
չինք ոռուրով, տեսնենք հետո ինչպես կլինի...  
Գոնե դերձակի ծախսը հանելի»:

Յերեկոները Շեվչենկոն տեղական թատրոնն և  
հաճախում կամ ընթերցում ե:

Տարվում ե Վ. Կուրոչինի թարդմանած Բերան-  
ժեյի հրաշալի բանաստեղծություններով: Իր ծանոթ-  
ներից մեկի մոտ Շեվչենկոն առաջին անդամ տեսնում  
ե «Հյուսիսային աստղ» հանդեսը: Շեվչենկոյին խո-  
րապես հուզում ե հանդեսի շատիկը կախաղանի դա-  
տապարտված դեկարբիստների պատկերներով: Շու-  
տով նրան հաջողվեց կարգալ Գերցենի «Մկրտված  
սեփականությունը» բրոյցուրը և նա նկատում ե,  
վոր դա «սրտապին, հոգեբուխ մարդկային խոսք ե»,  
իսկ հեղինակին նա սիրով անվանում ե «մեր առաք-  
յալը, մեր վտարանդին»: Յերբ Շեվչենկոյին առա-  
ջին անդամ կարգալու տվյան «Կոլոկոլ»—թերթը,

վորը հրատարակում եր Գերցենը կոնդոնում, Շեվ-  
չենկոն «Հնորհակալությամբ համբուրեց»:

Շատ ուրախացավ բանաստեղծը, յերբ իր հին  
բարեկամ Մ. Շշեպկինը յեկավ իր մոտ Նիժնի-Նով-  
գորոդ:

«Տոներից ամենալավը և հանդեսներից լավա-  
գույնը ինձ համար: Կիշերվա ժամը 3-ին յեկավ  
Միխայիլ Սեմյոնովիչ Շշեպկինը»:

Վեց որ միասին անցկացրին հին բարեկամները:  
Յերկուսն ել անցյալում ճորտեր, մեկը նրանցից ուու-  
սական հայտնի գերասան, մյուսը՝ ուկրաինական հան-  
ճարեղ բանաստեղծ:

Շշեպկինի մէկնելուց հետո Շեվչենկոն ավելի  
խորն զգաց իրեն շրջապատող մարդկանց չնչինու-  
թյունը և տեղական կյանքի միապաղապությունը:  
Նա անհամբերությամբ սպասում եր յերշանիկ բոպե-  
յին, յերբ թույլ կտան նրան զնալու մայրաքաղաք:  
Վերջապես թույլատրեցին, նա մեկնեց Մոսկվա, մի  
քանի որ մնաց այստեղ Շշեպկինի մոտ և մարտի  
27-ին (Հ. տ.) հասավ Պետերբուրգ:

Այստեղ տեղի եյին ունենում կատաղի վեճեր  
զյուղացիությունն աղատազրելու մասին: Զերնչե-  
սկին և Դոբրոլյուրովը ամենահեղափոխական դիրքն  
եյին բռնել: Նրանք քարոզում եյին վերացնել ճորտա-  
տիրությունը գյուղացիական ապստամբության մի-  
ջոցով, տաղալել ցարկողմբ:

Նրանց շուրջը, նրանց կողմից զեկավարվող «Առ-  
վեմեննիկ» հանդեսի շուրջն են համախմբված գրա-  
կանության և հասարակության լավագույն ներկայա-  
ցուցիչները: Եւ վչենկոն մշտապես մէծապույն սիրով  
եր վերաբերյում Պուշկինին, Լերմոնտովին, Գոդովին,

Աստրովսկուն, Սալտիկով-Շեղրինին։ Նա շատ  
բարձր եր գնահատում դեկարիստների հեղափոխա-  
կան սիրագործությունները, վորոնց անվանեց «ա-  
զատության առաջին ամեստարերներ»։ Նա ակնա-  
ծանքով եր վերաբերվում Գերցենի բոցավառ քարոզ-  
ներին։ Շեվչենկոյի մոտիկությունը Զերնիշեվսկու և  
Դոբրոլյուբովի խմբի համար հանդիսանում է որինաչափ  
և որդանական։ Այդ հանդիսանում ե միաժամանակ  
նրա նախորդ գործունելյության և ստեղծագործու-  
թյան շարունակությունը։

Հեղափոխական դեմոկրատները սիրով ելին վե-  
րաբերվում Շեվչենկոյին։ Գրական յերեկոներին մաս-  
նակցողներից մեկը, վորտեղ ներկա յեն յեղել Զեր-  
նեչևսկին և Շեվչենկոն, իր հիշողություններում այս-  
պիսի գեղք ե նկարագրում։ մի անդամ կոստոմարո-  
վի մոտ, վորտեղ գտնվում եր Շեվչենկոն, գալիս  
ե Զերնիշեսկին և պատմում ե.

«Գալիս եմ այստեղ քաղաքային խորհրդի մո-  
տով և յերկնքին նայելով ապշում եմ. այս ինչ ե կա-  
տարվում յերկնքում և վողջ տիեզերքում։ Այստեղ  
ինչոր նոր չոտենված աստղ ե հայտնվել, այնքան  
մեծ ու պայծառ, այնքան լուսատու, վոր թերես սի-  
րիուսն ու արկտուրան նրա մոտ վոչինչ են։ Յերբ  
մոտենում եմ այստեղին, տեսնեմ այդ աստղը կանգ-  
նած ե ուղիղ բալալայեվլայել\*։» գլխին։ Տաղասի

\*) — «Բալալայեվլա—կատակով անվանում ելին  
«Բալաբանովլա» հյուրանոցը, վորտեղ, Պետերբուր-  
գում ապրում եր կոստոմարովը և վորտեղ տեղի ելին  
ունենում գրական յերեկոներ Տ. Գ. Շեվչենկոյի  
մասնակցությամբ։

վելին եր բարձրացել այդ նոր աստղը»

Զերնիշեվսկու հետ Շեվչենկոն չատ մոտիկ հարաբե-  
րության մեջ եր։ Հեղափոխական դեմոկրատ-բա-  
նաստեղծ և թարգմանիչ Ն. Կուրոչկինը Շեվչենկոյին  
գրում ե.

«Թարգմանեցի, Տարասենկա, քո «Արցունքները».  
Հաջող ե թե վոչ, չդիմեմ։ Այս ի՞նչ բան ե, չես  
յերեսում... Քո նվիրական բանաստեղծություն-  
ներից ելի վորեւ բան ճարիր ուղարկիր։  
Ամբողջ հոգավ քեզ սիրով կուրոչկին»։

Յերբ Շեվչենկոն դեռ Նիժնի-Նովգորոդումն եր  
գտնվում, նա կուլիշից, կոստոմարովից և որինե-  
րից նամակներ ստացավ, վորտեղ նրանք դուլաբա-  
նում ելին նոր թագավորին և ամեն տեսակի ազա-  
տություններ ելին սպասում նրանից։ Կուլիշը Շեվչեն-  
կոյին խորհուրդ չավեց տպագրելու «Նեոֆիլաներ»  
նոր պոեման, համարելով վոր իբր թե կարիք չկա  
հիշեցնել «բարի վորդուն», այսինքն Ալեքսանդր յեր-  
կըրողին, նրա հայր Նիկոլայ առաջինի չար գործերի  
մասին։ Պետերբուրգ գալով Շեվչենկոն ավելի յե հա-  
մոզվում, վոր իր «հայրենակիցների» հույսերը վտան-  
գավոր են։

Նա գրում և այստեղ իր ամենից հեղափոխական  
և ցասկու յերկերից մեկը.

... Բարիք մի՛ սպասիր,

Մի՛ սպասիր տենչած աղատության...

Այդ բանաստեղծությունը տարածվեց ձեռադրով

և նույնպիսի հեղափոխական դեր ինչպես  
Զերնիշևկու «գեպի կացին կոչեցեք Ռուսաստանը...»  
կոչը:

Տարաս Գրիգորյեվիչն ապրում եր գեղարվեստա-  
կան ակադեմիային կից: Նրան սենյակ ելին հատկա-  
ցըրել, վորտեղ նա յեռանդուն կերպով պարապում  
եր ոՓորտներով, պղնձի վրա փորագրելով: 1860 թը-  
վականին մեծ հառաջադիմության համար նրան ա-  
կադեմիկոսի կոչում տվին:

Նրա ծանոթների շրջանն ավելի յէ բնդարձակ-  
վում: Բացի արդեն հիշված հեղափոխական դեմոկ-  
րատներից, նա ծանոթանում է այստեղ ուսւն նանա-  
վոր դրող Տուրենենի հետ: Իր հիշողություններում  
Տուրենեվը Շեվչենկոյի մասին դրում է.

«Նրա տաղանդը գրավում եր մեղ իր ինքնա-  
տիպությամբ և ուժով...մի անգամ, հիշում եմ,  
նա կարդաց ինձ մոտ իր հրաշարի «Յերեկո» «Բա-  
լենու այդին» բանաստեղծությունը և կարդաց  
այն պարզ ու անկեղծ: Նա ինքն դդացված եր և  
հուշեց բոլոր բնինդերին: Վողջ հարավուու-  
սական մտախոհությունը, փափկությունն ու հե-  
ղությունը, բանաստեղծական շեշտը, վոր կար  
նրա մեջ, այդտեղ պարզ կերպով գրսեվորվեց»:

Տարաս Գրիգորյեվիչը շատ բարձր կարծիք յեր  
Մարկո Վովչոկի «Ժողովրդական պատմվածքների»  
մասին: Հեղինակի հետ մինչև այդ նա ծանոթ չեր:  
Միայն այդտեղ Պետերբուրգում նա ծանոթացավ  
ուկրաինական այդ հրաշարի կին դրողի հետ: Թել

նըան նվիրված բանաստեղծության մեջ անվանում և  
նրան «աղջկին ես դու իմ»:

Տարաս Գրիգորյեվիչը բարեկամացավ նեղիտա-  
նական մեծ վողբերգակ դերասան Ոլլիչի հետ: Նա  
ծանոթ եր նույնպես յերգչուհի Ի.Լ.Գրիմբերգի հետ,  
վորի յերգը նա հաճույքով եր լսում:

Շեվչենկոն մասնակցում եր զբական յերեկոներին,  
անդյակ եր հասարակական քաղաքական անցքերին:  
Չերնիշևկու, Նեկրասովի և ուրիշ գեմոկրատների  
հետ միասին նա ստորագրեց Պետերբուրգում հրա-  
տարակվող ուեկայիսն «Խլուստրացիա» հանդեսի հա-  
կահրեական յելույթի դեմ ուղղված բողոքը:

1859 թվականի մայիսին Շեվչենկոն թույլտվու-  
թյուն ստացավ և մեկնեց Ուկրաինա: Այդ նրա վեր-  
ջին ճանապարհորդությունն եր: Մայրաքաղաքից նը-  
րա հետեւց կարգադրությունն եր արվել տեղական  
ժանդարմական բուլոր վարչություններին խստիվ  
հըսկել բանաստեղծին:

## VII

Ուկրաինայում Շեվչենկոն յերկար չճանապար-  
հորդեց: Նա այլտեղ հասավ 1859 թվի մայիսի վեր-  
ջին, հաճախեց հին վայրերը, հանդիպեց քրոջը՝ Յա-  
րինային և մյուս աղջականների հետ: Գրեթե ամ-  
բողջ ժամանակը նա անց եր կացնում դաշտում  
զյուղացիների հետ, նրանց հետ զրուցում եր հողի  
մասին և այն մասին, վոր թագավորից աղատություն  
սպասելն իդուր ե: Նրա զրուցիներում ավելի վառ  
կերպով եր արտահայտվում այն միտքը, վոր պետք  
չեն, վոչ թագավորները, վոչ պաները, վոչ տերտեր-  
ները:

Բանաստեղծը մեծ ցանկություն ուներ վերջնա-  
57

կանապես փոխադրվել Ուկրաինա, Դնեպրի ափին, բայց պաները վախենում եյին այդպիսի վտանգավոր հարկանից և չեյին ցականում հող վաճառել նրան: Կիևի գեներալ-նահանգապետն ասել եր, յեթե Շեվչենկոն ցանկանար բնակություն հաստատել այդ վայրերում, ապա նա կաշխատեր թույլ չտալ:

Հուլիսի 13-ին Շեվչենկոյին ձերբակալեցին «սըր-բազգծության» համար: Վոստիկանական հսկողության տակ նրան կիւ ուզարկեցին: Այդտեղ նրան բաց թողեցին և խորհուրդ տվին անմիջապես հեռանալ Ուկրաինայից: Բանաստեղծը մայրաքաղաք վերադարձավ:

1860 թվին Պետերբուրգում լույս տեսալ «Կորպարը» նոր հրատարակությամբ: Հեղափոխական դեմոկրատիան ջերմությամբ ընդունեց դիրքը:

Դորըույթովն իր հրաշալի հողվածում դրել եր. «Նա —ժողովրդական բանաստեղծ և ամբողջութին, այնպիսի բանաստեղծ, վորինմանը մենք չենք կարող ցույց տալ մեղանում: Նույնիսկ Կոլցովին չի կարելի համեմատել նրա հետ, վորովհետեւ իր մտածելու յեղանակով և նույնիսկ իր ձգտումներով վերջնա յերբեմն հեռանում և ժողովրդից: Շեվչենկոն, ընդհակառակը, նրա խոհերի վող ընթացքը և համակրանքը ամբողջովին համապահանում ե ժողովրդական կյանքի մտքին ու կառուցվածքին: Նա դուրս ե յեկել ժողովրդից, ապրել ե ժողովրդի հետ և վոչ միայն իր խոհերով, այլև իր կյանքի պայմաններով ամուր և արյունով կապված ե յեկել նրա հետ»:

«Կորպարի» նոր հրատարակության մեջ նույնպես

չյին մտել Շեվչենկոյի բոլոր բանաստեղծությունները, մանավանդ այնպիսիները, վորոնք ուղղված են ինքնակալության դեմ: Բայց դա նրան չի խանդարում: Նա մի շարք նոր բանաստեղծություններ ե գրում ուղղված կրոնի և թագավորի դեմ.

Ո, դժբախտ մարդիկ, յերկրային մարդիկ,

Զեր ինչին են պետք թագավորները,

Զեր ինչին են պետք շնապահները,

Զե՞ վոր դուք մարդ եք և վոչ թե չներ:

Բանաստեղծը խորապես հավատում ե, վոր չուտավ կհասնի յերջանիկ որը, յերբ

Մարդիկ լուռ,

Առանց վորեւ աղմուկի

Կտանեն թագավորին դլխատելու...

Յեկ այն ժամանակ աղատադրված ժողովուրդը իր ճակատագրի տերը կդառնա.

Կիենդանանան լճերը, տափաստանները,

Յեկ վոչ թե վերստաձողերը,

Այլ աղատության չափ լայն

Սուրբ ճանապարհները

Կվողեղորեն աշխարհը:

Յեկ բանաստեղծը վորեչնչված նախատեսում ե, վոր չուտապ

Կամի ժողովուրդը: Կմեռնեն թագավորները,

Յեկ նրանք, վորոնք դեռ չեն ծնվել...

Յեկ հոգի առած հողի վրա

Զի լինի թշնամին ու վոստիը,

Յեկ ամենքի մեջ դու քո յեղբորը կտեսնես,

Յեկ մարդիկ կլինեն յերկրի վրա:

Շեվչենկոյին հետաքրքրում եր ժողովրդական լուսավորության խնդիրը և նա «Ալբուրենարան» ե հըրատարակում գյուղական դպրոցների համար։ Իր կյանքի վերջին ամիսներին՝ բանաստեղծը ցավով ե մտածում այն մասին, վոր նրա հարսազատ յեղբայրներն ու քույրերը դեռ մինչեւ հիմա ել ճորտեր են և զբաղվում ե նրանց աղատադրելու խնդրով։

Նա յերազում ե նաև ամուսնության մասին, Դընեպրի ափը, իր սեփական տնակը փոխադրվելու մասին։ Խնդրում ե իր ծանոթներին շուտափույթ կերպով հողաբաժին առնել և տնակ կառուցել։

Բայց նրա առողջությունն արդեն քարաւած եր։ Դեռ աքարտավայրում նա տառապում եր վոսկը-բացախով, լնդախտով, աչքերի հիվանդությամբ։ Այժմ հիվանդությունը մահճին եր դամեւ նրան։

Մարտի 9-ին իր ծննդյան որը Շեվչենկոն մի քանի շնորհամորական հեռագրերո ստացավ։ Նրան հրավիրում ելին Ուկրաինա։ Յանկանում ելին նրան տպել յերկար տարիներ... իսկ 1861 թվի մարտի 10-ի առավոտյան Շեվչենկոն այլևս չկար։

Այես չկար ուկրաինական մեծ բանաստեղծը։ Մայրաբաղարի թերթերում մոչինչ չուպմեց նրա մահվան մասին, բայց ժողովրդական լայն մասսաները, նրա փայլուն տաղանդի յերկոտադուները յեկան վերջին պարտօրը տառու բանաստեղծի աճյունին։

Բանաստենին թաղեցին Պետերուրդում Սմոլենսկի գերեզմանատանը։ Նրա թարմ շիրմի վրա ուռւերեն և ուկրաիներեն լեզուներով շատ ճառեր ար-

տասանվեցին։ Հեղափոխական գեմոկրատիայի կողմից ջերմ խոսքերով յելույթ ունեցավ Շեվչենկոյի բարեկամն. Կուրոչկինը.

«Աչա մի նոր գերեզման ևս բացվեց մեր առաջ։ Նորից մի մաքուր, աղնիվ, պայծառ անձնավորություն հեռացավ մեղանից։ Նորից մի մարդ, վոր պատկանում եր ընտրյալների բարձր ընտանիքին։ այն ընտրյալների, վորոնք արտահայտել են ժողովրդի ամենավայլուն հույսերը, մի մարդ, վորը զուշակել ե նրա ամենանվիրական ցանկությունները և արտահայտել այդ բոլորը—ավարտեց իր դառն կյանքը, վոր հաղեցված եր համոզմունքներով և ամեն տեսակ տանջանքների պայքարով... Նրա վողջ կյանքը տանջանքների շարք եր։ Նոր եր իր կյանքի վերջում բախտը ժպտացել նրան։ նա տեսավ սկիզբը հասարակական այն դործի, վորին նա ձգտում եր ամբողջ հոգով... Նա չապրեց մինչև իրականացումն այն սկզբունքների, վարոնց տարածմանը նովաստել եր իր յերդերով։ Շատերի մասին չե, վոր կարելի յե ասեւ այն, ինչ վոր կարելի յե ասել նրա մասին։ Նա կյանքում կատարեց իր դործը։ Յաղանկությունը նրա համար չեր կյանքում, — նրան սպասում ե ուրիշ, հետմահյա յերջանկությունը— վառքը...»\*)

Ուստական մեծ բանաստեղծ Նեկրասովը գրեց «Շեվչենկոյի մահը» բանաստեղծությունը, վորտեղնա

\*) Հիշողություններ Շեվչենկոյի մասին, («Ունովա» 1861 թ. Ն. Ա. Կուրուչկին եջ 14-15)։

Համակրանքով ե Նկարադրում բանաստեղծի դառը  
կյանքը։ Արտասահմանում Գերցենն իր «Կոլոկոլ»  
թերթի եջերում արտահայտեց լավագույն մարդկանց  
համակած վիշտը, զայրույթ արտահայտեց ցարիկքի  
դեմ, վորը Շեվչենկոյին վաղաժամ դերեղման իջեց-  
րեց։

1861 թվի մայիսին բանաստեղծի բարեկամները  
թույլտվություն ձեռք բերին և նրա դաստիրը ա-  
ճյունի հետ միասին Ռուկրախնա փոխադրեցին և թա-  
ղեցին Կանեկից վոչ հեռու «Զերնէչէր» բլուրի վրա։

Ժողովրդական մասսաները սիրով և հարդանքով  
ըրջապատեցին բանաստեղծի դերեղմանը։ Մոտակա  
գյուղերից մարդիկ դալիս ելին այդտեղ և յերկու  
ամսում դերեղմանի վրա դամբանարլուր դոյրավ։  
Գյուղացիների մեջ Տարաս Գրիգորյեվիչի մասին հե-  
ղափոխական բաղմաթիվ թերենդներ ելին տարածվել։

Տեղական կալվածատեր պաները հուղվում ելին,  
նրանք Շեվչենկոյից մահենում ելին կենդանության  
որով, մախենում ելին նաև մահվանից հետո։

Նրանք աշխատում ելին, վոր գերեղմանը քանդեն  
և բանաստեղծի մարմինը փոխադրեն ուրիշ տեղ,  
«մորտեղ հավաքույթներ ու ցույցեր տեղի ունենալ  
չելին կարող»։

Տարական կառավարությունը խիստ կերպով ար-  
դեւո հիշատակել բանաստեղծի հորեւանական տա-  
րբեթերը։ Հատկապես դաժանորեն հետապնդվեց բա-  
նաստեղծի մեծարումը 1914 թվին նրա ծննդյան 100-  
ամյակի որը։

Իր «Աղջական քաղաքականության խնդրի չուրջը»  
հոդվածում Լենինը դրեւ ե,

«Շեվչենկոյի մեծարման արգելումը այնպիսի  
զերազանց, փառահեղ, հազվադեպ և բախտավոր ու  
հաջող միջոցառում եր կառավարության գլուխ ուղղու-  
թած ագիտացիայի տեսակետից, վոր դրանից լավ ա-  
գիտացիա պատկերացնել չե կարելի։

Այդ միջոցառումից հետո միլիոնավոր և միլի-  
ոնավոր «քաղաքանիներ» սկսեցին վերածվել դիտո-  
կից քաղաքացիների և համոզվել այն ասսցվածքի  
ծշտության մեջ, վոր Ռուսաստանը «ժողովուրդների  
բանու ե» (Լենին, հատ. 17, էջ 324—325)։

Յեկամ միայն սոցիալիստական մեծ հեղափոխու-  
թյունից հետո մեր յերկրում բանաստեղծի մեծարու-  
մը վեր ածվեց կուլտուրական մեծ տոնակատարու-  
թյան։

Իր «Կտակի» մեջ Շեվչենկոն կոչ եր անում ժո-  
ղովրդին ջախջախել շղթաները, նվաճել ազատու-  
թյուն։

Յեկ ինձ այդ մեծ ընտանիքում  
Յեկ աղատված և նոր,  
Մի՛ մոռացեք. հիշեցեք ինձ  
Խոսքով անչար, անդորր։

Մեծ, նոր, բազմազդի ընտանիքում, մեր հայրենի-  
քի աղատագրված յեղբայրական բոլոր ժողովուրդ-  
ների ընսանելքում, մենք հիշում ենք բանաստեղծին  
սիրո և հարգանքի բոցավառ խոսքով։

Մենք զինված ենք աշխարհում և մենասառ ջավոր  
ուսմունքով, Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի  
ուսմունքով։

Մենք պարծենում ենք մեր Սրբության ժողովը՝

վուրդների հզոր բարեկամությամբ:

Մենք տիրապետում ենք զենքի ամենանորադույն  
տեխնիկայի անսպառ զինանոցին:

Յեզ մեր զինանոցում զենքի այլ տեսակների չեղացնամքով պահպանում ենք ուկրաինական ժողովը՝ վըրդական մեծ Կորպարի անդնահատելի ժառանգությունը:

Կոմունիզմի վերջնական հաղթանակի համար մզվող պայքարում այդ ժառանգությունը մեծ ծառայություն է մատուցում: Դրա մեջ յեղել է, կա և կմնա Տ. Գ. Շելչենկոյի պոեզիայի բացառիկ անժանութը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0329301

385

10304